ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք, ՀՀ Լոռու մարզ, գ. Շահումյան 1փ. 66, Հեռ. (0322) 38462, 37897,
shahumyan.lori@mta.gov.am

N Ե-178/19
04 հունիս 2019թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Կից ներկայացնում եմ Շահումյան համայնքի ավագանու թիվ 15-Ա, 16-Ա, 17-Ա, 18-Ա, 19-Ն, 20-Ա և 21-Ա որոշումները:

Առդիր 7 թերթ:

6/4/2019

X _____

Համայնքի ղեկավար՝ **Էդիկ Մանուկյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 38462, 37897, shahumyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՀՈՒՆԻՍԻ 2019թվականի N 15-Ա

ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 Թ-Ի ՀՈՒՆԻՍԻ 03-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթներով՝ **ավագանին որոշում է.**

Հաստատել Շահումյան համայնքի ավագանու 2019թ-ի հունիսի 03-ի նիստի օրակարգը.

ՕՐԱԿԱՐԳ

2019թ-ի հունիսի 03-ի թիվ 04 նիստի

1. ՀՀ Լոռու մարզի ,,Շահումյանի գյուղական համայնքի կրթամարզամշակութային համալիր,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին:
2. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին:
3. ՀՀ Լոռու մարզի Շահումյան համայնքի ավագանու 15.04.2019թ-ի ,,ՀՀ Լոռու մարզի Շահումյան համայնքի ղեկավարի վարձատրության չափը, համայնքապետարանի և ,,Շահումյանի գյուղական համայնքի կրթամարզամշակութային համալիր,, ՀՈԱԿ-ի աշխատակազմերի աշխատակիցների թվաքանակները, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին,, թիվ 10-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
4. ՀՀ Լոռու մարզի Շահումյան համայնքի 2019թ-ի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին:
5. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնքի սեփականություն հանդիսացող գույքի աճուրդային և վարձակալության /կառուցապատման իրավունքի/ հանձնաժողովի կազմը հաստատելու մասին:
6. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող գույքը աճուրդով օտարելու, հողամասերը ուղղակի վաճառքով վաճառելու, կամ վարձակալությամբ /կառուցապատման իրավունքով/ մրցույթով տրամադրելու, աճուրդային և մրցութային հանձնաժողովի /աճուրդի կազմակերպչի/ գործունեության կանոնակարգը հաստատելու մասին:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐՄԵՆՅԱՆ ՀԱՅԿԱՐԱՄ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԵԼԵՆԱ

ՂՈՒՄԱՇՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱՆՎԵԼՅԱՆ ԿԱՄՈ

Համայնքի ղեկավար՝ ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 38462, 37897, shahumyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՀՈՒՆԻՍԻ 2019թվականի N 16-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ''ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՐԹԱՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ'' ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, ,,Նորմատիվ իրավական ակտերի մասին,, ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, Շահումյան համայնքի ավագանին.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Հաստատել ՀՀ Լոռու մարզի ,,Շահումյանի գյուղական համայնքի կրթամարզամշակութային համալիր,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի /նոր խմբագրությամբ/:

2. Ուժը կորցրած ճանաչել 11.01.2012թ-ի Շահումյան համայնքի ավագանու թիվ 01-Ա որոշման 3-րդ կետը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐՄԵՆՅԱՆ ՀԱՅԿԱՐԱՄ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԵԼԵՆԱ

ՂՈՒՄԱՇՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱՆՎԵԼՅԱՆ ԿԱՄՈ

Համայնքի ղեկավար ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 38462, 37897, shahumyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՀՈՒՆԻՍԻ 2019թվականի N 17-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ ,,Հողային օրենսգրքի,, 56-րդ հոդվածի 5-րդ կետով, 76-րդ հոդվածի 3-րդ կետով, ,,Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ,,Նորմատիվ իրավական ակտերի մասին,, ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 12.04.2001 թվականի թիվ 286-ն որոշմամբ հաստատված կարգով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի ներկայացրած առաջարկությունը, Շահումյան համայնքի ավագանին.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Տալ համաձայնություն Շահումյան համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող Դիլիջան մայրուղի 2-րդ փակուղի 1 հասցեում 06-084-0364-0002 ծածկագրով 0.85 հա հատուկ պահպանվող հողերի նպատակային նշանակության, հանգստի համար նախատեսված հողերի գործառնական նշանակության հողամասը կառուցապատման իրավունքով մրցույթով տրամադրելուն:
2. Կառուցապատման իրավունքի ժամկետը սահմանել 99 տարի:
3. Հողամասի կառուցապատման իրավունքի տարեկան վարձավճարի չափը սահմանել 110000 ՀՀ դրամ:
4. Սահմանել մրցույթի մասնակցության վճար՝ 5000 ՀՀ դրամ, նախավճարի և նվազագույն քայլի չափը՝ մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:
5. Համայնքի ղեկավարին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել կառուցապատման իրավունքով տրամադրվող հողամասի մրցույթի հայտարարության հրապարակային ծանուցումը:
6. Ուժը կորցրած ճանաչել Շահումյան համայնքի ավագանու 15.04.2019թ-ի թիվ 14-Ա որոշումը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐՄԵՆՅԱՆ ՀԱՅԿԱՐԱՄ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԵԼԵՆԱ
ՂՈՒՄԱՇՅԱՆ ԱՐՄԵՆ
ՄԱՆՎԵԼՅԱՆ ԿԱՄՈ

Համայնքի ղեկավար՝ ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 38462, 37897, shahumyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՀՈՒՆԻՍԻ 2019թվականի N 18-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 15.04.2019Թ-Ի ''ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ,,ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՐԹԱՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ,, ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԱԶՄԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿՆԵՐԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ'' ԹԻՎ 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Նորմատիվ իրավական ակտերի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների դրույթներով՝ համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

ՀՀ Լոռու մարզի Շահումյան համայնքի ավագանու 15.04.2019թ-ի ,,ՀՀ Լոռու մարզի Շահումյան համայնքի ղեկավարի վարձատրության չափը, համայնքապետարանի և ,,Շահումյանի գյուղական համայնքի կրթամարզամշակութային համալիր,, ՀՈԱԿ-ի աշխատակազմերի աշխատակիցների թվաքանակները, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին,, թիվ 10-Ա որոշման մեջ կատարել փոփոխություններ, այն է՝ որոշման 2-րդ հավելվածի աղյուսակի 9-րդ տողում դաստիարակի հաստիքային միավորը 1.12-ի փոխարեն սահմանել 1.25, իսկ պաշտոնային դրույքաչափը 99000 ՀՀ դրամի փոխարեն սահմանել 88000 ՀՀ դրամ:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐՄԵՆՅԱՆ ՀԱՅԿԱՐԱՄ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԵԼԵՆԱ

ՂՈՒՄԱՇՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱՆՎԵԼՅԱՆ ԿԱՄՈ

Համայնքի ղեկավար՝ ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 38462, 37897, shahumyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՀՈՒՆԻՍԻ 2019թվականի N 19-Ն

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019Թ-Ի ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական Ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, ,,Բյուջետային համակարգի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով՝ Շահումյան համայնքի ավագանին.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

Շահումյան համայնքի 2019թ-ի բյուջեում 03.06.2019թ-ին կատարել փոփոխություններ՝ համաձայն 1-5 հավելվածների:

1. Եկամուտների գծով

Ընդամենը - 70 975 800 /յոթանասուն միլիոն ինը հարյուր յոթանասունհինգ հազար ութ հարյուր/ դրամ

այդ թվում՝

- վարչական բյուջեի մասով - 70 975 800 /յոթանասուն միլիոն ինը հարյուր յոթանասունհինգ հազար ութ հարյուր/ դրամ
- ֆոնդային բյուջեի մասով - 0 / զրո / դրամ

2. Ծախսերի գծով

Ընդամենը - 84 893 700 /ութսունչորս միլիոն ութ հարյուր իննսուներեք հազար յոթ հարյուր/ դրամ

այդ թվում՝

- վարչական բյուջեի մասով - 70 975 800 /յոթանասուն միլիոն ինը հարյուր յոթանասունհինգ հազար ութ հարյուր/ դրամ
- ֆոնդային բյուջեի մասով - 13 917 900 /տասներեք միլիոն ինը հարյուր տասնյոթ հազար ինը հարյուր/ դրամ:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐՄԵՆՅԱՆ ՀԱՅԿԱՐԱՄ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԵԼԵՆԱ
ՂՈՒՄԱՇՅԱՆ ԱՐՄԵՆ
ՄԱՆՎԵԼՅԱՆ ԿԱՄՈ

Համայնքի ղեկավար՝ ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 38462, 37897, shahumyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՀՈՒՆԻՍԻ 2019թվականի N 20-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ /ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ/ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Շահումյան համայնքի ավագանին.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Շահումյան համայնքում համայնքային սեփականություն հանդիսացող գույքը աճուրդով կամ վարձակալությամբ /կառուցապատման իրավունքով/ հատկացնելու նպատակով ստեղծել հանձնաժողով հետևյալ անհատական կազմով՝

Հանձնաժողովի նախագահ՝ Էդիկ Մանուկյան – համայնքի ղեկավար

հանձնաժողովի անդամներ՝ Կարեն Սարգսյան - համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ

Աշոտ Մխիթարյան - Շահումյանի համայնքապետարանի աշխատակազմի տնտեսվար

Արմեն Ղումաշյան - համայնքի ավագանու անդամ

Հովհաննես Մանուկյան - համայնքի ավագանու անդամ

2. Աճուրդավար նշանակել հանձնաժողովի նախագահ Էդիկ Մանուկյանին, արձանագրող՝ համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանին:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐՄԵՆՅԱՆ ՀԱՅԿԱՐԱՄ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԵԼԵՆԱ

ՂՈՒՄԱՇՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱՆՎԵԼՅԱՆ ԿԱՄՈ

Համայնքի ղեկավար՝ **ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 38462, 37897, shahumyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՀՈՒՆԻՍԻ 2019թվականի N 21-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ԿԱՄ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ /ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ/ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՎ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (ԱՃՈՒՐԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԻ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով«Տեղական ինքնակառավարման մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով,«Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Շահումյան համայնքի ավագանին.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

Հաստատել Շահումյան համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող գույքը աճուրդով օտարելու, հողամասը ուղղակի վաճառքով վաճառելու կամ վարձակալությամբ /կառուցապատման իրավունքով/ մրցույթով տրամադրելու, աճուրդային և մրցութային հանձնաժողովի /աճուրդի կազմակերպչի/ գործունեության կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐՄԵՆՅԱՆ ՀԱՅԿԱՐԱՄ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԵԼԵՆԱ

ՂՈՒՄԱՇՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱՆՎԵԼՅԱՆ ԿԱՄՈ

Համայնքի ղեկավար՝ **ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ**